ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » «_____» 2025թ. **N ---- -Ն**

ՈՐՈՇՈՒՄ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 632-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի «Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» N 632-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«3. Թույլտվություն ստանալու համար դիմումատուն Երևանի քաղաքապետին կամ վարչական շրջանի ղեկավարին ներկայացնում է էլեկտրոնային եղանակով դիմում՝ www.dimum.yerevan.am առցանց հարթակի միջոցով, որին կից ներկայացվում են.

1) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական ռեգիստրի գրանցման քաղվածքը.

2) շենքի կամ շինության սեփականության կամ օգտագործման վկայականի պատճենը.

3) տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը.

4) դիմումատուի Երևան համայնքի հանդեպ պարտավորությունների բացակայության վերաբերյալ Երևանի վարչական շրջանի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի պատճենը.

5) օբյեկտի ճակատային մասի գունավոր լուսանկարը:»:

2) Ձև N 2-ը ճանաչել ուժը կորցրած:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի Ն 632-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի հունվարի 1-ից ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի և հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման, իսկ 2025 թվականի հունվարի 1-ից՝ հեղուկ վառելիքի վաճառքի, սեղմված բնական գազի վաճառքի, հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի, խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու, «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման, առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություններ ստանալու համար դիմումները ներկայացվում են միայն էլեկտրոնային եղանակով՝ https://dimum.yerevan.am/ առցանց հարթակի միջոցով, ինչի արդյունքում տնտեսվարող սուբյեկտները նշված թույլտվությունները ստանում են առցանց համակարգում լրացնելով հայտը և կատարելով առցանց վճարում:

Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 46-Ա որոշման հավելվածով հաստատված Երևանի զարգացման 2024-2028 թվականների հնգամյա ծրագրով նախատեսված է իրականացնել առևտրի և ծառայությունների ոլորտի թույլտվությունների հայցման և տրման թվայնացման գործընթացներ, ինչը կհանգեցնի տնտեսվարող սուբյեկտների աշխատանքի հարմարության և արդյունավետության, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցման և թափանցիկության բարձրացմանը:

Վերոգրյալի կապակցությամբ նախատեսվում է առևտրի և ծառայությունների ոլորտի Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N 632-Ն որոշմամբ

սահմանված բոլոր թույլտվությունները ստանալու համար դիմումներն ընդունել և տրամադրել բացառապես էլեկտրոնային եղանակով՝ https://dimum.yerevan.am/ առցանց հարթակի միջոցով:

Վերը նշված թույլտվությունների ստացման վերաբերյալ դիմումները առցանց հարթակով ներկայացնելու պարագայում սահմանված դիմումի Ձև N 2-ի անհրաժեշտությունը բացակայում է:

Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի «Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի եվ վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» N 632-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխություններ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ